

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՅՑԸ՝ ԱՆԹԻԼԻԱՍ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարույս Փետրուար ամսուն սկիզբը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին արտասահման այցելութիւնը, որ զրեթէ աննախընթաց երեսոյթ մըն էր Էջմիածնայ կաթողիկոսներու տարեգրութիւններուն մէջ, ընդհանուր խանդավառութեամբ և կրօնական արտակարգ խնդով լեցուց բազմահազար հայերու հոգիները:

Վեհափառ Հայրապետին արտասահման գտնուած բոլոր օրերուն, մեր հոգիները զեղուն էին ուրախութեամբ և մթնոլորտը լի էր ազգային տօնի մը հանդիսութեամբ և մեծվայելչութեամբ:

Վեհափառին այցը բոլորին կողմէ ընդունուեցաւ իբրեւ շնորհաբեր և օրհնաբեր զալուստ, որ իր հովանիին ներքեւ ի մի համախմբեց օտարութեան մէջ ցրուած պանդուխտ զաւակները Ս. Էջմիածնի և անկէ ճառագայթող մեր Ս. Եկեղեցւոյ շնորհին մէջ անգամ մը ևս շաղկեց մեր էութիւնները:

* *

12 Փետրուարի առաւօտուն, Պէյրութի խալտէի միջազգային օդակայանը կը յորդէր հայ ժողովուրդի բազմութեամբ. եկած էին մեծով - պզտիկով, ժողովուրդի բոլոր խաւերէն, իրենց հաւատարմութիւնը և սէրը արտայայտելու՝ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետին:

Air-France-ի օդանաւ մը, Փարիզէն, օդակայանին մէջտեղ հասցուց Վեհափառն ու իրեն ընկերացող չքախումբը: Իր պատկառազգու հասակով, ամբողջ հմայք և օրհնութիւն, երբ երեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսը, արեւին զիմաց կը շողողար իր վեղարին վրայ Հայրապետական խաչը, մինչ ան իր սուրբ աջով կ'օրհնէր բազմահազար ժողովուրդը, որ սպիտակ աղաւնիներ կը թռչնէր իր շուրջը: Դիմաւորելու համար եկած էին օտար և քոյր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչներ և պետական անձնաւորութիւններ: Օդակա-

յանի շէնքին օրհններէն մէկուն մէջ ընդունուեցաւ Վեհը և իր օրհնութեան խօսքը ըրաւ և ի միջի այլոց ըսաւ խուռնեքամ ժողովուրդին օրհնք կարօտով և յուզումով մտիկ ըրին իր պատգամը. —

«Սիրելի ժողովուրդ Հայոց Լիբանանի, Ամենայն Հայոց փառաւոր և Աստուածարեալ Տաճար Ս. Էջմիածնէն ողջոյն և օրհնութիւն կը բերեմ Զեզի: Ողջոյն և օրհնութիւն այս բարի և խաղաղ երկրին, ուր հայ ժողովուրդի զաւակները իրենց գթախտութեան օրերուն ապաստան գտան և լծուեցան խաղաղ և շինարար աշխատանքի, իբրեւ իրենց երկրորդ հայրենիքը: Ողջոյն և օրհնութիւն Լիբանանի Վսեմ. Նախագահին, կառավարութեան և ժողովուրդին:»

Զինուորական պատիւներով և Լիբանանի Հանրապետութեան Նախագահին ինքնաշարժով, Վեհը առաջնորդուեցաւ Անթիլիասի Վանքը, հազարաւոր կառքերու ընկերակցութեամբ: Իր չքախումբին կ'ընկերանային Էջմիածնայ Միաբանութեան անդամներէն Գեր. Տ. Վարդան Եպս. Տէր Սահակեան և Հոգ. Տ. Պարգև Արդ. Դէորդեան, Փրօֆ. Հայկ Առաքելեան և Էջմիածնայ Դիւանի Քարտուղար՝ Տիար Ա. Առաքելեան, ինչպէս նաեւ Եւրոպայի կաթ. Պատուիրակ և Փարիզի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Սերոփէ Եպս. Մանուկեան:

Օդակայանէն մինչև Անթիլիաս Վեհը առաջնորդուեցաւ աննախընթաց խանդավառութեամբ և ժողովրդական ցոյցերով: Ժամրաներու վրայ լինուած էին կամարներ, Ամենայն Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթանքի յայտարարութիւններով: Ժամրաներու վրայ և Վեհին ոտքերուն առջև մորթուեցան ոչխարներ և ճերմակ աղաւնիներու խումբեր արձակուեցան, ձմեռնային առաւօտեան բացառիկ գեղեցկութեամբ և պայծառ օդին մէջ:

Անթիլիասի Վեհարանին մէջ ևս Վեհը

խօսեցաւ ժողովուրդին և եկեղեցական դասուն և ըսաւ. — «Մեր Ս. Հաւատքի աստուածականոյց կեդրոն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն սիրոյ ողջոյն Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին, Գերապատիւ Տեղապահ Տ. Խորէն եպիսկոպոսին, ամբողջ Միաբանութեան և մեր հարազատ ժողովուրդին:

«Ողջոյն և օրհնութիւն Միածնաէջ Տաճարէն, ողջոյն մեր Հայրենիքէն, ողջոյն Արարատէն, Մայր Արաքսի ափերէն և Զերու մեր Մայր Հայրենիքի հարազատ եղբայրներէն ու քոյրերէն:

«Երբ Ս. Էջմիածնէն կը բաժնուէինք դէպի Երևան, յաջորդ օրը մեկնելու համար Մոսկուա և ապա այս հիւրընկալ ափերը, իջման Ս. Սեղանին առջև ծուկի եկայ և աղօթեցի որպէսզի մենք մեր սուրբ նպատակին հասնինք, ամրացնելով, պայծառացնելով, շէնցնելով մեր Ս. Եկեղեցին, ի միութարուծիւն մեր Աստուածարեալ Եկեղեցիին և ժողովուրդին:

«Աւելի ևս ամրացնենք սիրոյ կապը մեր Մայր Աթոռին և Կիլիկիան կաթողիկոսութեան միջև: Դեռ Էջմիածնի մէջ, առաջնորդուած մեր Ս. Եկեղեցւոյ սիրոյ, միութեան և գերազոյն շահերը պաշտպանելու և ամրապնդելու գիտակցութենէն, որոշեցինք անձամբ մասնակցել Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան և օժման:

«Երբ իջման Ս. Սեղանէն կը բաժնուէի, և տակաւին հոն՝ խորհրդաւոր շունչին տակ կը գտնուէի մեր Տաճարին, ճամբայ ելլելով, մթազնած երկինքի հորիզոնին վրայ տեսայ զոյգ վեհափառ Մասիսներու կատարները, իջման Սուրբ Սեղաններ անոնք ալ: Կը խորհիմ թէ Աստուած չբարկացաւ երբ իմ ուխտը կրկնեցի Արարատին առջև ալ:

«Յոգնած էք բոլորդ ալ, ըսելիքներ շատ ունիմ գեռ, յետագայ օրերուն պիտի լսենք իրար սրտէ բխած խօսքեր, և պիտի ճանչնանք զիրար, վասնզի հարազատ եղբայրները կը ճանչնան զիրար»:

Ապա՝ ըստ նախապէս որոշուած թուականին, Փետր. 14ին բացուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսական Ընտրութեան Պատգամաւորական Ժողովը: Վեհափառը, բացման առթիւ ճառ մը խօսեցաւ և ըսաւ. —

«Երկու օրերու ընթացքին տեսնեմք և հաստատեցինք թէ ստեղծուած է կացու-

թիւն մը, որ չի տանիր սիրոյ և միութեան, Այս երևոյթը կրնայ աղիտայի դառնալ Եկեղեցւոյ և ժողովուրդին խաղաղութեան համար:

«Իբր Լ.Մենայն Հայոց կաթողիկոս, խօսքս ուղղելով Զերբոյրիկ կ'ըսեմ. — Իմ յորդորը, խորհուրդը և առաջարկը, այն է որ այսօրուան գումարուկիք ժողովը բացուի յառաջիկայ երեքշաբթի օր. որպէսզի մենք կարենանք կողմերը հանդարտեցնել և հաշտութեան եզր մը գտնել: Առանց սիրոյ և համերաշխութեան, անիմաստ կը գտնենք զիրար նախատելով ժողով գումարելու: Այսպիսի միջոցառում կարելի չէ ըմբռնել Եկեղեցւոյ ծոցին մէջ»:

Ապա Վեհափառը անցաւ իր սենեակը, յորմեհեաէ սկսան վիճարարութիւններ: Որոշուեցաւ առժամեայ զիւան մը կազմել և Մանտաները ստուգել: Ժողովը տեղւոյն վրայ փակելու և յառաջիկայ շաբաթ գումարուելու մասին վէճը աւելնալով, ժողովէն մեկնեցան Դամասկոսի պատգամաւորները, Հալէպի պատգամաւորներէն Տեառք Թումալեան և Սալաթեան, Լիբանանի պատգամաւորներէն Տօթթ. Ե. Ժիտէճեան, Տիար Ապրօ Ապրոյեան և ուրիշներ, Կիլ. Միաբանութենէն Գեր. Տ. Գերենիկ Եպոս. և ուրիշներ:

Պատգամաւորական Ժողովը, նախագահութեամբ Գեր. Տ. Խորէն եպոս. իր աշխատանքները շարունակեց առժամեայ զիւան մը կազմելով որ ապա ինքզինքը հռչակեց տեւական զիւան: Յաջորդ նիստը շաբաթ մը ետքը գումարելու որոշումով, զիւանին պարտականութիւն յանձնուեցաւ Վեհափառին տեղեկացնել:

Վեհը, համերաշխութեան գեալին մը չգտնելով բեկուած և յուզումնալից մեկնեցաւ Անթիլիասէն և Լիբանանէն 20 Փետրուարի Երկուշաբթի առտու, դէպի Եզրիպտոս ուր ընդունուեցաւ ժողովրդական մեծ խանդավառութեամբ:

* * *

Մարտ 5ին, տեղի ունեցաւ Դահլիշի Ազգ. Առաջնորդարանին մէջ, Հայց. Եկեղեցւոյ բարձրաստիճան եկեղեցականներուն համագումարը, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին: Ժողովին ատենապետն էր Գեր. Տ. Եզրիշէ Արքեպս. Տէրտէրեան,

խիկ ատենադպր՝ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան:

Համագումարը ունեցաւ ութը նիստեր, որոշումներ տուաւ և նկատի առաւ հետեւեալ խնդիրները. Ա. — Հայց. Եկեղեցւոյ սահմանադրութեան կազմութիւն: Բ. — Հայց. Եկեղեցւոյ կանոնադրի պատրաստութիւն: Գ. — Հայերէն Աստուածաշունչի տպագրութեան 300 ամեակի առիթով, Աստուածաշունչ գրոց աշխարհաբար լեզուի թարգմանութիւնը: Դ. — Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի ուժեղացման և բարգաւաճման համար, ինչպէս նաև թեմերու զօրացման համար արտասահմանէն եկեղեցականներ Էջմիածին հրաւիրել: Ե. — Գե. րազոյն Հոգեւոր Խորհուրդի կողքին, Հոգեւոր կաճառի մը կազմութեան խնդիր: Զ. — Հայց. Եկեղեցւոյ ընդհանուր բարեկարգութիւն:

Գահիրէի հպիսկոպոսական ժողովը երկու նիստեր ալ յատկացուց Կիլ. կաթողիկոսական ընտրութեան վերաբերմամբ և նկատի առնելով ծագած տագնապը, եօթը կէտերէ բաղկացած համաձայնագիր մը ներկայացուց Տանն Կիլ. Կաթող. Տեղապահ՝ Տ. Խորէն Եպս. ինչ. որուն ընդունուելէն ետք, կաթողիկոսական ընտրութիւնը պիտի նկատուէր ընդունելի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. ինք անձամբ պիտի ընէր Ս. Օծումը և այդ ձևով ապահովուած պիտի ըլլար Հայց. Եկեղեցւոյ միասնականութիւնը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Վեհափառ Հայրապետը, նպատակ ունենալով այցելել կարգ մը գաղութներ, Գահիրէի հպիսկոպոսական ժողովէն ետք, մեկնեցաւ Հոովմ, եւ հիւրը եղաւ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան եւ յետոյ Անգլիոյ մէջ, Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսին: Հոն փափաք ունեցաւ մասնաւոր հանդիպում մը ունենալու հանգուցեալ Գ. Կիւլպէնկեանի տղուն և փեսին հանգուցեալին կտակէն Ս. Էջմիածնի բաժինը վերցնելու, ինչպէս նաև ուրիշ նուէրներ ընդունելու համար:

Կիրակի, Ապրիլի 15ին, Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցիին մէջ, Վեհափառ Հայրապետի ներկայութեան, Քէնթըրպըրիի Արքեպս. ր քարոզ մը խօսեցաւ և ըսաւ.

Ձերդ Սրբութիւն,

Կը վստահացնեմ Ձեզ որ մեծ հաճոյք մը և մենաշնորհ մըն է մեզ համար Ձեզ ունենալ մեր մէջ: Ձեր այցելութիւնը եզակի դէպք մըն է: Թէև այս բառը այս օրերուն շատ կը յեղշկուի, այնուամենայնիւ կրնամ ըսել թէ դարերով կաթողիկոս մը իր երկրէն դուրս իր հօտին ի խնդիր առաքելական ճամբորդութիւն մը չէ ըրած: Ձեր եկեղեցին քրիստոնէական եկեղեցիներուն մէջ առանձին տեղ մը ունի, վասն զի առաքելական է և առաջին Ազգային եկեղեցին, ու քրիստոնէութիւնը չօրրորդ դարուն պաշտօնական կրօն հռչակուեցաւ Հայկական պետութեան կողմէ: Կրնամ ըսել նաև թէ Հայ եկեղեցին այն միակ եկեղեցին է որ առանձինն իր ցաւերուն և տառապանքին մէջ մնաց և կը մնայ հաւատարիմ իր հաւատքին և վարդապետութեան, իր ժողովուրդը ուր ուրեք ալ գտնուի, ձեռներէց և շնորհալի զաւակներ ունի:

Այսօր ուրախ ենք որ երկու քոյր և եկեղեցիներու միջև, Ձերդ Սրբութեան ներկայութեամբ, բարեկամութիւնը կ'աւելնայ: Ոչ մէկ Հայ կաթողիկոս Ձեռնէ առաջ եկած է Անգլիա:

Ս. Զատիկն յաջորդող երկրորդ Կիրակին, Ձեր օրացոյցին համաձայն կը կոչուի Աշխարհամատարան Կիրակէ, որ համաշխարհային եկեղեցիին հաստատման տօնն է. ուրախալի պարագայ մըն է մեզի համար այս տօնին, այս Ս. Եկեղեցիին մէջ խոստովանիլ մեր քրիստոնէական հաւատքը իբրև ի Քրիստոս մէկ եկեղեցւոյ զաւակներ որուն յաջորդութեան և իրականացման համար ինքը, մեր Տէրը՝ Յիսուս, մեզ կ'առաջնորդէ:

Յարուցեալ մեր Տիրոջ հաւատքին մէջ կ'ողջունենք Ձերդ Սրբութեան զալուստը և Ձեզ՝ սիրելի հաւատացեալ եղբայրներ և քոյրեր: Տիրոջ յաղթական հաւատքին մէջ կը մասնակցինք Ս. Պատարագի խորհուրդին, երկնքի և երկրի առջև, խաչեալ, յարուցեալ և կենդանի Քրիստոսը քարոզելու համար: Թող Տէրը առաջնորդէ Հայ յաստանեայց առաքելական և Անկիլքան եկեղեցին ի խաղաղութիւն, համերաշխ գործունէութիւն և բարեկամութիւն, Ամէն:

Վեհափառ Հայրապետը քանի մը օրեր Անգլիա մնալէն ետք, վերադարձաւ Ս. Էջմիածին:

ԶԱՒԼՆ ՎՐԴ. Զ.